ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

81-20
« 24» մարտի 2020թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ

Ձեզ ենք ներկայացնում Վահագնի համայնքի ղեկավարի 20.03.2020թ. թիվ 12, և 24.03.2020թ. թիվ 13-Ա որոշումները:

Առդիր 3 թերթ:

ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Վահագնի համայնք, գ. Վահագնի
հեռ.՝ 0322-6-95-37

## Ո Ր Ո Շ Ու Մ

« 20 » մարտի 2020 թվականի N 12

### ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 Թ. ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ և ԾԱԽՍԵՐԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԲԱՇԽՈՒՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածով և Վահագնի համայնքի ավագանու 2020 թ.-ի մարտի 20-ի «Վահագնի համայնքի 2020 թ.-ի փոփոխված բյուջեն հաստատելու մասին» թիվ 11-Ն որոշմամբ.

**Որոշում եմ.**

Հաստատել Վահագնի համայնքի 2020 թ.-ի բյուջեի եկամուտների և ծախսերի եռամսյակային բաշխումը:

ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Վահագնի համայնք, գ. Վահագնի
հեռ.՝ 0322-6-95-37

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 մարտի 2020թ. թիվ 13-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ « ՎԱՀԱԳՆԻ
ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՎԱՐԱԿԻ
ՏԱՐԱԾՄԱՆ, ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՎ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ՇՏԱԲ»
ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի «ա», «ե», «զ» և «է» կետերով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 18.03.2020թ. թիվ 01/107.4/02528-2020 գրությունը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր հիվանդության <<Հանրային առողջապահության ոլորտում միջազգային նշանակության արտակարգ իրավիճակ առաջացնելու ներուժ ունեցող» դեպքի արձագանքմամբ պայմանավորված Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վահագնի համայնքի բնակչության պաշտպանության կազմակերպման նպատակով ձևավորել կորոնավիրուսի վարակի տարածման, կանխարգելման և արձագանքման համայնքային շտաբ (այսուհետ՝ շտաբ):

2. Հաստատել շտաբի կազմը՝ համաձայն հավելված 1-ի:

ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ

Հավելված 1.
ՀՀ Լոռու մարզի Վահագնի
համայնքի ղեկավարի
2020թ. մարտի 24-ի
թիվ 13-Ա որոշման

ԿԱԶՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՇՏԱԲԻ

Սուրեն Կոստանդյան - շտաբի պետ, ՀՀ Լոռու մարզի Վահագնի համայնքի ղեկավար

Շտաբի անդամներ.

Նարինե Հովհաննիսյան - ՀՀ Լոռու մարզի Վահագնի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար

Նազելի Կիրակոսյան - ՀՀ Լոռու մարզի Վահագնիի առողջության կենտրոնի բուժքույր

Աշոտ Դավթյան - ՀՀ Ոստիկանության Լոռու մարզային վարչության Գուգարքի բաժնի համայնքային ոստիկանության բաժանմունքի տեսուչ

Էդիկ Մքոյան - ՀՀ Լոռու մարզի Վահագնի համայնքի ավագանու անդամ

ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս. ԿՈՍՏԱՆԴՅԱՆ